ՈՐԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Պապիկյան Առողջապահական Արտադրանք» ՓԲԸ-ն իրականացնելով ախտահանիչ և մանրէազերծող նյութերի արտադրություն՝ խիստ կարևորում է բարձր և կայուն որակի ապահովումը: Ընկերության նպատակն է ապահովել առողջապահության ոլորտում հիգիենայի հուսալի լուծումներ, որոնք համապատասխանում են միջազգային ամենաբարձր չափանիշներին և նպաստում են պատշաճ ախտահանման ապահովմանը:

Հաշվի առնելով մեր գործունեության կարևոր դերը հանրային առողջության ոլորտում և գիտակցելով պատասխանատվությունը մեր հաճախորդների առաջ՝ մեզ համար առաջնահերթ է արտադրանքի անվտանգությունը և որակը: Մեր նպատակն է նոր մշակույթ և մոտեցում ստեղծել առողջապահության ոլորտում՝ ապահովելով շարունակական բարելավում և կայուն առաջընթաց:

«Պապիկյան Առողջապահական Արտադրանք» ՓԲԸ-ի ղեկավարությունը հաստատակամ է ներդնել և պահպանել Որակի կառավարման համակարգի պահանջները ըստ ISO 9001:2015 միջազգային ստանդարտի: Մենք կարևորում ենք մեր հաճախորդների գոհունակությունը և վստահությունը՝ ապահովելով նրանց կարիքների բացահայտումը և բավարարումը:

Մեզ համար առաջնահերթ է յուրաքանչյուր սպառողի առողջությունը, անվտանգությունը ու բարեկեցությունը՝ ընդգծելով հիգիենայի կարևորությունը վնասակար մանրէների փոխանցման և վարակների կանխարգելման գործում:

Որակի քաղաքականությունը հասանելի է և ներդրված ընկերության բոլոր մակարդակներում և արտացոլում է ղեկավարության հաստատակամությունը՝ պահպանելու Որակի նկատմամբ սահմանված պահանջները: